

ԱԶՍՏՈՒԹԻՒՆԸ չափու
համար չէ որ կը հրատա-
րակուի:

ԱԶՍՏՈՒԹԻՒՆԸ տունէ
տուն ու քաղաքէ քա-
ղաք շրջելով դրամ կամ
բաժանորդ չի մուրար:

ՀԱՅ Ժողովրդի յառաջ-
դիմութիւնը մեր շահն
է, իսկ Հայոց ազատու-
թիւնը ԱԶՍՏՈՒԹԻՒՆԻ
նպատակն է...

Ազատութիւն

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Circulation
larger than
any other
Armen. paper
in the U. S.

Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 57

ՆՈՒ ԵՌՐԻ, 1892, ՅՈՒՆԻՍ 30

ԳԻՆ ՀԻՆԳ ՍԵՆՔ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Շար. և վերջ տե՛ս թիւ 56)

Միւս օր առաւօտուն երբ դուրս
եկայ սենեկէս, բազմութիւնն հոն
էր նորէն. կարծես թէ ոչ ոք դը-
նացած էր այդ գիշերն ինչեւեւ հա-
մար: Անհամբերութեան նշաններ
կը տեսնուէին ամէն անհատի դէմ-
քին վրայ: Այդ առտու ինձ ա-
ռաջին դորձ ըրի այցելել զՕրմա-
նեան սրբազան: Երբ մտայ նորին
Սրբազնութեան սենեակն, նա մը-
տախտիկ կը գրէր: Դեռ ես չէի նը-
տած մի այլ երկայնահասակ երի-
տասարդ ներս մտաւ, որոյ անունն
հարկ չեմ տեսներ տալ, ու գրու-
թիւն մը ցոյց տուաւ նորին Սըր-
բազնութեան, և մի քանի խօսքեր
փոխանակելէ վերջ պատրաստուե-
ցաւ մեկնել, բայց երթալէ առաջ
աւելցուց ի մէջ այլոց թէ «սրբա-
զան, անշուշտ ամէն ջանք ի դորձ
պիտի դնէք ի զմիլիոն սրբազանն
առաջին ընտրելի ընելու համար»:
Սաստիկ յուզուած էի, բայց յու-
զումս ու ցասումս չի մատնելու
համար պաղարիւն ձեւացայ. սա-
կայն երիտասարդի մեկնելէն յե-
տոյ, նոյն խնդիրն խօսակցութեան
առարկայ դարձաւ իմ և սրբազա-
նին մէջտեղ: Երբ ըսի թէ այդ-
պիսի մի ձեռնարկ ազգին շահուց
հակառակ է գլխովին, նա պա-
տասխանեց ըսելով թէ՝

— Երկուքին ալ հաւատարմութեան
կուտանք: Թող միւսներն ալ չի
ջանան սեւեռել ի իմիլիոն սրբա-
զանի անունն:

— Ի իմիլիոն չէ կարելի որ
Հայրիկ լինի, և արդարութիւն
չէ նորին Սրբազնութիւնն Հայրի-
կի հաւատարմութեան: Եթէ այդ ե-
րիտասարդի կարծիքին հետեւիք,
սրբազան, կրնամ ձեզ վստահացը-
նել թէ այս ընտրութիւնն չի պի-
տի յաջողի: Սակայն վերջի խօսքս
ըսելու համար պարտիմ աւելցը-
նել թէ մեր ազգն Միլիթարեան
ու խափն երկու ուսեալ եսկիւ-
պոսներ ունէր, որոյ մին, Լուսին-
եան սրբազանն, ինկաւ արդէն:
Այժմ Ձեր Սրբազնութիւնն միա-
ցած է. եթէ այս փափուկ պարա-
գային մէջ չի հաճիք թարգման
կանգնել ժողովրդի իր ճիշդ ու փա-
փաքանաց, գուցէ սա փոքր սխալն
պատճառ լինի ձեր ժողովրդակա-
նութիւնն կորսնցնելու:

Հայս ըսելով աջն համբուրե-
ցի ու մեկնեցայ Պ. Առաքելեանցի
ըով երթալու համար:

Երբ ներս մտայ, ներկայ էին
հոն ուրիշներ ևս, ինչպէս նաեւ
Պ. Գ. Արծրունին, քաջ պարագը-
լուխն: Հոս պաշտօնական զեկու-
ցում եղաւ «Մշակ»ի խմբագրին
Կիւլալէիկեան Էֆ. ի միջոցաւ հա-
ւասար քուէ տալ երկու ընտրել-
եաց ևս: Բայց Պ. Արծրունի մէ-
կէն մերժեց ըսելով.

— Կարելի բան չէ, կարելի
բան չէ: Պէտք է որ Հայրիկ 20-25
քուէ աւելի ստանայ: Միայն Հայ-
րիկին պիտի ըսեմ «ընտրեմ» միւս-
ներին ո'չ ընտրեմ, ո'չ ընտրեմ,
ո'չ ընտրեմ: Եթէ ձեռքս ալ կըտ-
րեն «ընտրեմ» չի պիտի գրեմ
միւսներին:

Վերջապէս հասաւ ժամը, պատ-
գամաւորը գումարուեցան ի վե-
հարան, ու ժողովուրդն երթալով
բազմացաւ ու յուզումն և ան-
համբերութիւնն ծայրայեղութեան
հասաւ: Շատ երկիւղ կար որ մեծ
խռովութիւններ յառաջ գան, բայց
փառք երկնից որ ամէն բան խա-
ղաղութեամբ անցաւ:

Բոպէն հասած էր. ամէն բան
անյայտ և անորոշ: Ահա պատգա-
մաւորը դուրս եկան վեհարանէն.
ոմանց կուրծքերն չքանդանքով
զարդարուած կը փայլէին լոյսի
առջեւ, իսկ ոմանց դէմքերն մը-
ռայլ են, զի վեհարանէն անհա-
մաձայն եկան բաժնուած: Ժողո-
վրդեան ցոյցերն բնականաբար
բազմապատիկ էին այսօր: «Կէցցէ
Հայրիկ, կէցցէ պատգամաւորու-
թիւն» կը գոռային ամէն կողմէ,
և այդ անհուն բազմութիւնն կար-
ծես մէկ մարդու պէս միեւնոյն
կաղաղակէր: Վերջապէս պատգա-
մաւորը եկեղեցի ի իման զուսիակ
նիստ ընելու համար, ալ ամէն
ոք կսպասէր ընտրութեան արդ-
իւնքն լսել անհամբեր:

Կէս օր էր ճիշդ: Արեւն իւր
գէնիթէն կը ցոլար անհամբեր ժո-
ղովրդին վրայ Կաթողիկէի բարձ-
րերէն, երբ յանկարծ զանգակն
իմացուց այն աւետիս զոր դուք
եւս առած էք այժմ: Խորմեան
Հայրիկ առաջին ընտրելի ընտրե-
ուած էր: Այդ էր զանգակին ա-
ւետիսը: Կրնաք անշուշտ երեւա-
կայել խնդութիւնն ու ուրախու-
թիւնն ժողովրդեան: Կեցցէներու
աղաղակն վանքն ի հիմանց դըրը-
ղեց: Վեհ. Ձարին և Հայրիկի կե-
նաց համար եղած բարեմաղդու-
թիւններ մինչ երկնից բարձրա-
ցան:

Ժամը երկուք էր երբ ժողովն
փակուեցաւ ու պատգամաւորը
դուրս ելնել սկսեցին: Ժողովուր-
դն խնդութեան աղաղակներով
ոջնուեց իւր պատգամաւորներն.
և երբ մօտեցան Գ. Արծրունին
իրենց ձեռաց վրայ բարձրացնելու
համար, «Մշակ»ի պարկեւտ խմբ-
ագիրն մերժեց այդ ցոյցն ու
բաւականացաւ այն կեցցէներով
որք կը լսուէին իր անուան հետ
մէկտեղ: Մեծ ցոյցեր եղան նաեւ
ի պատիւ Արիստակէս և Տեղա-
պաճ Սրբազաններու համար, որք
ոգնով չափ աշխատած էին ազգի
ընտրելին ընտրել տալու համար:

Պատգամաւորը, ինչպէս նաեւ
կառավարութեան պաշտօնեացը և
այլ նշանաւոր անձինք բազմու-
թեան մէջէն անցնելով գնացին

ճաշելու: Սեղանին նախագահեց
Տեղապաճ Սրբազանն, որոյ մէկ
կողմն նստեցան կառավարութեան
պաշտօնեացը և միւս կողմն հոգե-
ւորական և աշխարհական պատ-
գամաւորք: Տեղապաճ սրբազանն
օրհնեց սեղանն և յետոյ դաւաթ
առաջարկեց Վեհ. Ձարին կենաց,
որ բուռն ծափահարութեամբ ըն-
դունուեցաւ: Երկրորդ դաւաթն
թարգմանի միջոցաւ առաջարկու-
ցաւ Էջմիածնի հաստատութեան
համար, որ նմանապէս յոռնկայ
ընդունուեցաւ որոտազին ծափա-
հարութեամբ, և այս պահուս «Էջ
Միածին ի Հօր» շարականն եր-
գուեցաւ ձեռնարանի աշակերտաց
կողմանէ: Տեղապաճ սրբազանն
մի դաւաթ եւս առաջարկեց Խրիմ-
եան Հայրիկի կենաց, որ յոռնկայ
ընդունուեցաւ ծափահարութեանց
որոտներուն մէջ: Գաւաթներ ա-
ռաջարկուեցան նաեւ այլ և այլ
նշանաւոր եկեղեցականներու ու
աշխարհականներու կենաց:

Ամերիկայի Հայոց պատգա-
մաւորն որ սեղանակիցներէ մին
էր այդ օր, ունէր մի համառօտ
բանախօսութիւն և առաջարկելիք
մի դաւաթ: Երբ յարմար ժամա-
նակն հասաւ նա յոռնկայեցաւ,
որպէս օրէն է, և խօսեցաւ իւր
15 րոպէ: Նախ ատենաբան իւր
խորին շնորհակալիքն յայտնեց.
յետոյ բացատրելով նոր ընտրու-
թեան մեծ նշանակութիւնն դուք
պատգամաւորութեան ջանքերն և
յանուն Ամերիկայի Հայ գաղթա-
կանութեան դահ կողմ ընտրու-
թեան արդիւնքին համար: «Ինե-
լով Ամերիկայի քաղաքացի, ըսաւ,
ազատ կարծիքս կը յայտնեմ: Հոս
ամենքս ալ գիտնեք թէ ընդհա-
նուր ազգի փափաքանաց համա-
ձայն ընտրութիւն մը կատարուե-
ցաւ, Հայրիկ առաջին ընտրելի ը-
նելով: Յոյս մեծ ունինք որ նորին
Վեհափառութիւնն ընդհանուր
Հայ ազգի բարի իղձերուն համա-
ձայն Ս. Լուսաւորչի աթոռին վը-
րայ պիտի հաստատէ Հայոց Հայ-
րիկը: Այն ազգը որ դարեւոր ի վեր
հաւատարիմ մնացած է, հաւա-
տարիմ պիտի մնայ նորէն. այն
ազգը որ Մեկեղեցիներ, Լազարէֆ-
ներ, Տէր Դուկասոֆներ ևս. տու-
ած է, պատրաստ է տակաւին այդ-
պիսի զիջեցողութիւն տալ կայսե-
րական կառավարութեան: Այս
իրական ապացոյցներն յոյս մեծ
ունինք որ նորին Վեհափառու-
թիւնն ի նկատի պիտի ունենայ
այս կենսական խնդրի մէջ:» Եւ
բանախօսութեան, Սարաֆեան
առաջարկեց իւր դաւաթն սեղա-
նակից պաշտօնեայնէրու կենաց:
Որոտազին ծափահարութիւննե-
րով ու կեցցէներու աղաղակներով
զաւաթներն պարպուեցան ի պա-
տիւ կառավարական պաշտօնէից:

Նոյն երեկոյ լուսավառութիւն
տեղի ունեցաւ: Կաթողիկէի վը-
րայ և ամէն կողմ լապտերներ կախ-
ուած էին ի պատիւ Հայոց Հայրի-
կի ընտրութեան: Վանքն բազմու-
թեամբ լեցուած էր: Հայրիկի եր-
գըն կրկնուեցաւ բազում անգամ,

թէ ժողովրդի և թէ ձեռնարանի
աշակերտաց կողմանէ, որք իրենց
տեսիլ Արիստակէս սրբազանի հետ
ներկայ էին հոն: Ոմանց կողմանէ
առաջարկուեցաւ ձեր պատգամա-
ւորին մի բանախօսութիւն ևս ը-
նել այդ զուարթագէտ բազմու-
թեան: Այս տողեր գրողն ընդու-
նեց այս առաջարկ, ու խօսեցաւ
իւր կէս ժամ բնաբան ունենալով
ժողովրդական ասացուած թէ «բա-
րի մարդը կը մեռնի անունը կը
թողու»: Երբ ատենաբանն օրուան
զիջեցանքին վրայ խօսիլ սկսեց,
բուռն ծափահարութիւնը օգը
դղրդեցին, և նոյն պահուս զան-
գակատան մէջ Հայրիկի մեծազիր
պատկերն տեսնուեցաւ լուսերու
մէջ շրջապատուած. նմանապէս
անգին նորնորիկաթողիկոսի պատ-
կերն մոգական լապտերի մը մէջէ
ցոլալ սկսեց: Յետ ատենախօսու-
թեան երգեր երգուեցան և ուշ
ատեն ժողովուրդն ցրուել սկսեց
գոհ ու հանգիստ օրտով:

Մայիս 16ին Ս. Պատարագ
մատուցուեցաւ դահաժառանգի
ծննդեան առաւ առթիւ, և յետ
Ս. Պատարագի բարեմաղթութիւն-
ներ եղան կայսերական գերդաս-
տանի կենաց:

Ուրախ օրն Երեւանի Հայ
հասարակութեան կողմանէ մի
ճաշկերոյթ տրուեցաւ, որուն ներ-
կայ էին շատ մը պատգամաւորներ
ու նշանաւոր անձինք, ինչպէս
նաեւ ձեր պատգամաւորն որ չը-
րաւիրուած էր մասնաւոր կերպիւ:
Ճաշն տեղի ունեցաւ ռուսներու
բանի մէջ շատ չքեղ կերպիւ: Սե-
ղանին կառավարիչ կարգուեցաւ
Պ. Արգար Յովհաննէսեան՝ «Ար-
ձագանք»ի խմբագիրն: Երեկոյ
խօսք տրուեցաւ այս առթիւ Տե-
ղապաճ սրբազանին, որ բաժակներ
առաջարկեց Վեհ. Ձարին, Շահին
և Սուլթանին կենաց: Բազմաթիւ
բաժակներ առաջարկուեցան նա-
եւ Հայոց Հայրիկի և այլ նշանա-
ւոր ազգայիններու կենաց: Բա-
նախօսութիւններ եղան Օրման-
եան սրբազանի, Դեռնոյ եպիսկո-
օփանեանի (Կարնոյ առաջնորդ)
Եւզոկիոյ առաջնորդի Եղիշէ վար-
դապետի, Կեսարիոյ առաջնորդի
և այլոց կողմանէ:

Աշխարհական դասէն խօսե-
ցան Պ. Արծրունի, Պ. Առաքել-
եանց պատգամաւոր Պարսկաստա-
նի և Հնդկաստանի, Տեղ. Նէվ-
րուզեան, Գ. Էֆ. Փափաղեան,
ուսուցչական դասէն մի պարոն
և Ամերիկայի Հայոց պատգամա-
ւորն որ տեղեկութիւններ հա-
ղորդեց Ամերիկայի Հայոց նկատ-
մամբ: Յետ սորա բանախօսու-
թեան դաւաթ առաջարկուեցաւ
այն Հայ գաղթականներու համար
որք թէ՛ն Հայաստանէն հեռի, բայց
սրտով և հոգեով մօտ են անոր
միջոց:

Յ. ՍԱՐԱՅԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒՆ
ԱՐԳԵԼՈՒՄԸ Ի Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պօլսէն Յունիս 5 թուա-
կանաւ կը գրեն թէ Սուլթանի և
Ալեքեան Պատրիարքի շնորհիւ
Սահմանադրութեան տարեդարձի
հանդէսն տեղի չէ ունեցած ի Պոլիս
թէ և ի սկզբան հրաման տրուած է
այս մասին, բայց վերջի պահուս
բարձրագոյն հրամանաւ արդիւ-
րուած է եղեր: «Արմէնիա»ի գըր-
ուած նամակէ մը հետեւեալն կը
քաղենք այս խնդրոյ նկատմամբ:

«Ժողովրդի մեծամասնութիւ-
նը առաւօտուն կանուխ գունդա-
դունդ Սիրիքէն և Գումգաբու կը
գլխին ամեն կարգի և սեռի ազ-
գայինք. բայց մեծ կըլլայ իրենց
զարմանքը երբ ոստիկաններ և ոս-
տիկան-գլխուորներ կայարաննե-
րուն մուտք և Եփեսոսէի հա-
մար տոմարից փաճառու մը կար-
գիլին, ըսելով թէ «պարտաւոր
եւսաղ տըր գարտաւոր կիսին»:
Տաճկական փոսած քաղաքականու-
թեամբ բոլոր պաշտօնէից արգիլ-
ուած էր բուռն ճշմարտութիւնը,
այսինքն հանդիսին արգիլումը

Ժողովրդին իմացնել: Ժողովրդը
եան մէկ մասը քաջութիւն կու-
նենայ հետնադ մինչ Եփեսոսէ
քալել. սակայն և այնպէս թէ՛ Հի-
ւանդանոցի հանդիպակաց պար-
տիկն և թէ՛ Եփեսոսէի պա-
րիսպներուն բոլոր մուտքերն փակ-
ուած կը գտնեն բազմաթիւ հեծե-
լազորով, ոստիկաններով և գըր-
խու մալէ շատ լրտեսներով. ա-
մենուրեք ժողովրդին կը պատա-
խանեն «պու գարուտան եւսաղ
տըր, Եփէէի գարուտան»: Եւ
կը գտնուէին միամիտներ որք,
կիզիշ արեւուն ջերմութեան են-
թակայ, կը դեգերէին մէկ դունէն
միւսը, մէկ անցէն միւս անցը,
ամեն տեղ միեւնոյն պատախանը
ընդունելով:

Տաճկական քաղաքականու-
թեամբ՝ 8-10 տարեկան տղոց և
կանանց մուտքը աղաւտ էր առա-
ւօտուն, մինչեւ օր 2-300 ընտա-
նիք հաւաքուեցան պարտէպին մէջ
յետ օրոյ՝ այն ալ արգիլուեցաւ.
այսչափ մը դիմամբ թողյալու-
թիւն ըրին որպէս զի հետեւեալ
օրն տեղական լրագրաց բոնի գը-
րիւ տան «Երէկ վայելուէ չըով տե-
ղի ունեցաւ Ալեքային Սահմանա-
դրութեան տարեդարձի հանդէսը
ևս...»: Եւ յետոյ, երբ եւրո-
պայի Հայերը եղելութիւնը հրա-
տարակեն կառավարութիւնը ձեռ-
քը դնէր մ'ունենայ պատախա-
նելու թէ աղոնք բոլոր թշնամա-
կան ստացոյ գրոցներ են...»:

Ալեքեան Պատրիարքը Հոգե-
գալութեան տօնին առթիւ Բերայի
Ս. Երրորդութեան եկեղեցին պի-
տի պատարագէր երէկ, բայց ժո-
ղովրդական յուզումէ վախճալով
իր տան մէջ կծկուեցաւ ամբողջ
օրը. կըսուի թէ շարաթ օրը հրա-
ժարական մատուցեր է. ես չեմ
հաւատար. բայց ի թէ առաւ իսկ
ըլլայ՝ ամեն վայրկեան ահուգողի
մէջ պիտի ըլլայ որ մի գուցէ հը-
րաժարականը ընդունուի Հրաժա-
րականի ի հարկէ կը մերժուի և ին-
քը կը փութայ աւելի ամբողջիդ
հաստատուիլ աթոռին վրայ, ըսե-
ով թէ «Վեհ. Սուլթանի կամըր
ոյսպէս է»:

Հայաստան

ԿԻՍՍՄՍԵԱՅ
ԱԶԱՅՈՒՆ ԻՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ
ԱՄԷՆ ԱՄՍՈՑ 15ԻՆ ԵՒ 30ԻՆ

Խմբագիր—Տնօրէն
ՀԱՅԿԱԿ Յ. ԷԿԻՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամէն երկրի համար
Տարեկան Մէկ տուար

Ո՛ր և է ծրար կամ գրութիւն
ուղղել հետեւեալ հասցէին
TO THE **AZADOUTIUN**,
438 Pearl St.
New York City, U.S. A.

Azadoutinn,
LIBERTY.

Published Twice a month
By
Azadoutinn Publishing Company
438 PEARL ST.,
NEW YORK CITY

H. EGUINIAN,
Editor.

SUBSCRIPTION PRICE, free of postage, \$1.00 a year.

Entered at the New York Post Office as
second class mail matter.

ՆԻՒ ԵՈՐԻՔ, Յունիս 30 1892

ՁՐԻ ՔՆՆԱԳԱՆՆԵՐՆ

Քննադատել բան մը գիրքին
է շատ, և փնտռելու համար քննա-
դատելն ևս նոյնչափ գիրքին միջոց,
և ամէն մարդ այս երկրի մէջ ա-
զատ է քննադատելու. բայց թէ
այսինչ կամ այսինչ անձը իրաւունք
ունի՞ր քննադատել այս կամ այն
գործը, խնդիր մ'է զոր ժողովրդին
կը մնայ լուծել:

Մեր մէջ քննադատներն ա-
ռատ են ամէն կլիմայի տակ: Յաւ
է ըսել թէ այս սովորութեան դէ-
կողմը ուրիշ նման սովորութեանց
հետ այնչափ արմատացեր է մեր
մէջ որ կարծես թէ ազգային բը-
նաւորութեանց կարգը դատուելու
չափ ընդհանրացած է ամէն կողմ:
Արդարեւ քննադատներ, մասնա-
ւանդ ձրի քննադատներն շատ են
մեր մէջ, բայց քիչեր կան որք գի-
տեն թէ ինչ է քննադատութիւն-
ըն, և երբ հարկաւոր:

Երբ մէկը ազգին շահուց հա-
կառակ մի ու է ձեռնարկ քննադա-
տելու կենէ, ի հարկէ զայն հիմ-
նահատակ ընել է իւր նպատակն.
և այս չէ անարգարութիւն. բայց
երբ մէկը կուգայ յարուածել
գործ մը որոյ վրայ լոկ կասկած մը
ունի, արդար չէ որ զայն կործա-
նելու չափ ծանրանայ այդ մասին:

Ամէն գործ կամ ձեռնարկ
քննադատութիւն կրնայ վերցու-
նել, և քննադատութիւնն շատ ան-
գամ գործի մը մտրակը կրնայ լինիլ
զայն յառաջ մղելու համար: Բայց
երբ մտրակին հարուածներն շատ
ուժգին ըլլան մահ յառաջ կուգայ.
հետեւաբար մտրակողն կախում
ունի խղճի մտօք մտրակելու աս-
տիճանն:

Բայց քննադատներու ամէնէ
փնտաւարներն ցոյց չի տուինք
տակաւին: Այն մարդը որ ամէն
բան, ամէն ձեռնարկ կամ իրարու

հակառակ երկու գործեր և կամ
տարբեր սկզբանց ծառայող երկու
ընկերութիւններ կը քննադատու-
միւնեոյն կերպիւ՝ զայնս գիտու-
թեամբ կամ անգիտութեամբ վը-
նասելու լոկ նպատակաւ ձրի բըն-
նադատ մ'է և քննադատներու
ամէնէ փնտաւարն:

Օրինակ մը մէջ բերելու հա-
մար Հայոց Հայրենասիրական Մի-
ութիւնն և Հնչակեան կուսակ-
ցութիւնն ձեռք առնունք: Այս
երկու կուսակցութեանց յատա-
կագիծն բոլորովին իրարմէ տար-
բեր է. ոմանք միոյն կը յարին և
ոմանք միւսին, և ոմանք ալ եր-
կուքն ալ դուրս կը գտնուին:
Երբ սոքա փոխադարձաբար մէկ-
ըմէկու սկզբունքներն կը քննա-
դատեն՝ արդար են. բայց երբ չէ-
զօք կամ երկուքն ալ դուրս մար-
դիկ թէ մին կը քննադատեն և
թէ միւսն լոկ փնտաւար նպատա-
կաւ, ձրի քննադատներ են. սոցա
փնտաւարութիւնն իւր դադարթ-
նակէտին կը հասնի երբ Հնչակ-
եաններու քով Հայրենասիրական-
ներն ու Հայրենասիրաց քով Հըն-
չակեաններն կը քննադատեն՝ պա-
խարակելով միմեքեւմայն նոցա
սկզբունքն ու նպատակի միջոցնե-
րըն: Այսպիսի քննադատք ցեցեր
են որք իրենց մուտ գաած տեղն
կապականեն բոլորովին: Եթէ Հայ
ժողովուրդն նուազ քաջալեր տայ
այսպիսիներուն՝ իւր փնտաւ
մասամբ դարմանած կը լինի: Երբ
մէկը ազգասէր կը ձեռնայ և ո-
չինչ կընէ այս և այն ազգային
խմբին՝ չարաչար քննադատելէ
զատ, չենք գիտեր թէ ի՞նչու չի
հայածուիր իւր ձրի քննադատ, և
ի՞նչու մեր Հայրենակիցք ժամա-
նակ կը վատենն այդպիսեաց ասու-
թիւններն մտիկ ընելու: Մարդ
իւր գործերով կը դատուի երբ
ազգասէր ձեռնացողն սչինչ զոհո-
ղութիւն կընէ իւր կողմէ՝ ձրի և
կործանիչ խօսքերէ զատ, պէտք
է «արտաքին խաւարին» մէջ մի-
այն տեղ մ'ունենայ իւր ատամնե-
րըն կրճատելու համար:

ՓԱԹԸՐՈՒՆԻ ՀԱՅՔ
ԵՒ

Հ. Ե. Թ. ՄԻՈՒԹԻՒՆ

Յուլիս ևին տեղի պիտի ու-
նենայ Փաթըրուին մէջ նոյն քա-
ղաքի հաստատութեան հարկաւ-
րամակը մեծ չքով, և տեղւոյն Հայ
գաղթականութիւնն ալ մաս պի-
տի ունենայ այդ հանդիսին մէջ
պաշտօնական անուան տակ: Նիւ
Եորքէ և շրջականերէ շատ մը Հա-
յեր պիտի երթան մաս առնուլ
մեծ թափօրին մէջ յանուն նոյն
քաղաքի Հայ գաղթականութեան,
և արդէն կարգադիր մասնախում-
բըն մեծ պատրաստութիւններ տե-
սած է իւր նոյն աւուր Հայ հիւ-
րերն ստանուելու համար:

Ընթերցողք գիտեն անշուտ
թէ Յուլիս և թանգարանի Մի-
ութեան տարեկան հանդիսի և ժո-
ղովի օրն է: Բայց այս տարի Փա-
թըրուին տարեդարձի խնդրոյն
առթիւ յետաձգուած է այդ ժո-
ղով, ստանհութիւն տալու հա-
մար Հայ հասարակութեան Փա-
թըրուին երթալ՝ տեղւոյն Հայոց
օգտակար լինելու համար: Սակայն
ցաւ է տեսնել թէ ոմանք զրոյց
հանած են թէ Փաթըրուին Հայք
գիտամար քրտն են յիշեալ կար-
գադրութիւնն թանգարանին յար-
ուած մը տալու մտօք: Արդարեւ
ճշմարտութեան բոլորովին հակա-
ռակ է մտածել այսպէս, կամ այդ-
պիսի տարածայնութիւն մը ձգել

ժողովրդի մէջ, զանի որ Փաթըր-
ուին Հայք մեծաւ մասամբ, եթէ
չըսենք անխոր, թանգարանի Մի-
ութեան գործն անդամներն են
եղած՝ նոյն միութեան ծնած օ-
րէն ի վեր. և եթէ կարելի լինէր
փոխել Փաթըրուին հարկաւրամե-
կին օրը, անշուտ մեր նոյն քա-
ղաքի Հայրենակիցք սիրով պիտի
ընէին այդ փոփոխութիւնն թան-
գարանն պատուելու համար. բայց
որովհետեւ անկարելիութիւն էր
այդ ընել և մանաւանդ որ մեր
Հայրենակցաց իրաւասութեանն
բոլորովին դուրս, հետեւաբար
թանգարանի Միութեան կը մնար
իւր Փաթըրուին անդամաց սկսած
այդ գործին աւելի փայլ մը տա-
լու համար՝ յետաձգել իւր տա-
րեկան ժողովն ու հանդէս ուրիշ
մի յարմար աւուր:

Յոյս մեծ ունինք որ քաղա-
քիս և շրջակայից Հայք այս ձրի
տարածայնութեանց առանց ու է
արժէք տալու, պիտի փութան
քաջալերել մեր Փաթըրուին քոյր
գաղթականութիւնն ճիշդ այնպէս
որպէս Փաթըրուինք պատուած
են զմեզ շատ առթիւներու մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԱՌԹԻՒ

Ասկէ քանի մը ամիսներ առաջ
քաղաքիս Հայաստանեայց ուղղա-
փառ Ս. Եկեղեցւոյ Հոգաբարձու-
թիւնն մի ընդհանուր եկեղեցա-
կան ժողով գումարեց Ս. Ոսկե-
բերան եկեղեցւոյ մէջ, գիտնալու
համար թէ արդե՞օք ժողովուրդն
ի սրտէ կը փափաքէր եկեղեցա-
կան պաշտամունքն շարունակել
քաղաքիս մէջ անընդհատ կերպիւ,
և թէ հաճութիւն ունէ՞ր տարե-
կան իւր 300 տուար դրամ Հայ-
թայթել վարդապետի երթեւեկու-
թեան և այլ կարեւոր ծախքերն
գոցելու համար: Հայ հասարակու-
թիւնն իւր գաղտնի քուէներով
այդ երեկոյ վստահացուց Հոգա-
բարձութիւնն թէ կրօնական ըզ-
գայմունք դեռ վառ էին իրենց
սրտի մէջ, և թէ պատրաստ են
ամէն ձիւք ի գործ դնել մեր նա-
խահարց եկեղեցին հաստատ պա-
հելու համար: Հոգաբարձութիւնն
այս ցոյցերէն քաջալերուելով քիչ
օրեր վերջ մի հանգանակութիւն
սկսեց:

Շատ կրօնասէր ազգայիններ
փութացին այս առթիւ ստորագրե-
րել տարեկան մի որոշեալ գու-
մար՝ իրենց ուղած ձեւերով վճա-
րելու պայմանաւ: Բայց որովհե-
տեւ պատեհութիւն ու ժամանակ
կը պակասէր ամէն անհատի ներ-
կայացնելու համար այս հանգա-
նակութեան խնդիրն, ուստի Հո-
գաբարձութիւնն մի այլ ընդհա-
նուր ժողով գումարեց քանի մը
չարաթ առաջ մի և նոյն եկեղեցին
մէջ, իրաց վիճակն ժողովրդին ներ-
կայացնելու համար: Այդ երեկոյ
ներկայ էին բաւական ազգայիններ
որք խնդիրն լաւ մը ծեծելէ վերջ՝
երեք օգնականներ տուին Հոգա-
բարձութեան՝ հանգանակութեան
գործը ընդ փոյթ լրացնելու հա-
մար:

Ուրախ ենք արձանագրել թէ
այժմ 210 տուարէ աւելի ստորա-
գրուած կայ արդէն, և այդ գու-
մար կրկնապատուելու յոյսն ու-
նի ամէն հարազատ զաւակ մեր
նախահարց եկեղեցւոյն: Հարկ է
նաեւ յաւելուլ թէ ցարդ ստորա-
գրող անցանց թիւը 50ք չէ ան-
ցած տակաւին, մինչդեռ քաղա-
քիս և շրջակայից մէջ ընակող Հայ
եկեղեցւոյ հարազատ զաւակունք
հարկւրներով կը հաշուին:

Արդ հրաւէր կը կարգանք մեր
Հայրենակցաց փութալ և ստորա-
գրել մի գումար այս հանդանա-
կութիւն լրացնելու համար: Ար-
գարեւ անպատուարեր բան մը
պիտի լինի մեր անուան եթէ չի
կարողանանք հարկ եղած գումա-
րէն շատ աւելի ստորագրել ու իշ-
խանութիւն տալ Հոգաբարձու-
թեան իւր գործ յառաջ մղելու
համար: Հոս մեր բողոքական ազ-
գայինք շատ սակաւ են թուով,
բայց մէկէ աւելի տեղեր կրօնա-
կան պաշտամունք ունին տարբեր
յարանուանութեանց համամատ:
Մեզ համար պատուարեր բան մը
չի պիտի լինի լքանել այն եկեղե-
ցին որ մի միակն է հարկաւրուր
Հայերու համար՝ որք կը բնակին
քաղաքիս ու շրջակայից մէջ:

Կոչում կընենք ամէն Հայու
կրօնական զգացման, և կը հրա-
ւիրենք չի թերանալ իրենց այս
կրօնական պարտականութեանց
մէջ:

ՄԵԹ.— Յիշեալ հանգանակու-
թեան տեսքն դիւրութեան համար
խմբագրութեանս յանձնուած է:
Ստորագրել փափաքող ազգայինք
դիւրութիւն պիտի ունենան այսու
զայն ստորագրելու համար:

ԱՆԱՐԳԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ ԴԵՄ

Ընթերցողք կը յիշեն անշուտ
թէ Հայկական Միութիւնն քանի
մը ամիսներ առաջ յանձնախումբ
մը կազմած էր՝ պաշտօն տալով
անոր մի հերքում գրել ԱԶԱՏՈՒ-
ԹԻՒՆԻ խմբագրութեան՝ անոր հը-
րատարակած մի նկարագրին ընդ-
դէմ: Այդ յանձնախումբն բաւա-
կան ատեն անցնելէ վերջ՝ վերջերս
յղած է մեզ գրութիւն մը հրատա-
րակելու համար: Նամակն կը կրէ
Յունիս 15 թուականն և կը պա-
րունակէ այնպիսի կծու և անտեղի
ակնարկութիւններ լրագրոյս խմբ-
ագրութեան դէմ, որ եթէ Հայ-
կական Միութեան ընդհանուր ժո-
ղովն զայն կանխաւ կարգացած լի-
նէր, վստահ ենք թէ կիսով չափ
պիտի զեղջիւր՝ և այնպէս յղէր
զայն ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ խմբագրու-
թեան: Մենք այդ նամակը հարկ
չենք համարել հրատարակել նախ՝
շատ հինցած, երկրորդ՝ նամակն
պարզ հերքում մը լինելէ բոլո-
րովին զուրկ ըլլալուն համար:
Քաջ գիտենք թէ Հայկական Մի-
ութիւնն իրաւունք չի տուաւ
յիշեալ յանձնախումբին անարգանք
գրել ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ դէմ, այլ
հերքել անոր նկարագրի ինչ ինչ
կէտերն՝ ի հարկէ քաղաքավարու-
թեան ու պաշտօնի օրինաց շըր-
ջանին մէջ միայն:

Ա. Զ. Դ.

Մասնաւորապէս կը խնդրուի
Հայ հասարակութեանն որ եթէ
գիտեն և ունին ամբողջն «Հայրիկ
ջան» կրգին, հաճին զայն մեզ
խաւրել նոր երգարանին մէջ դըր-
ուելու համար:

Ripans Tabules relieve nausea.

ՏՔԹ. Յ. ԹՕՓՐԱՀԱՆԵԱՆ
ԱՏԱՄՆԱԲՈՑ ԵՒ ԱՏԱՄՆԱԳՈՐԾ
306 Արեւմուտք 125րդ փողոց

Յաճախողներն կը գոհացնէ
արուեստի ամէն ճիւղերուն մէջ
գոհացուցիչ պայմաններով:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՇՍՀՈՒ ՀՍՄԱՐ
ՁԻ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Այսպէս գրուած կայ մեր թեր-
թի ճակատին վրայ. և է ճշմար-
տութիւն մը: Բայց ոմանք զայդ
սխալ ըմբռնելու կամ սխալ
հասկնալու պակասութիւնն ունե-
ցած լինելով՝ հարկ կը համարինք
համառօտ բացատրութիւն մը տալ
այդ մասին: Սոքա նկարագրով որ
ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ շահու համար չի
հրատարակուի, իրենց պարտքերն
չեն վճարեր, և մինչեւ անգամ
պարտք չեն սեպեր՝ իրենց ստա-
ցած լրագրին փոխարէնն հատու-
ցանել խմբագրութեանս: Բայց
հարկ է գիտնալ թէ «ԱԶԱՏՈՒ-
ԹԻՒՆԸ շահու համար չի հրատա-
րակուիր» ըսելն, չի նշանակեր թէ
այս թերթ փնտաւ համար կը հրա-
տարակուի: Ի հարկէ թերթին
խմբագիրն ու հրատարակիչը չա՛հ
չեն ակնկալեր այս գործէն, բայց
չեն ալ կրնար ձրի թերթ խաւրել.
հետեւաբար ժողովուրդն սլորտի
վճարել երբ կը սերէ ընդունիլ
զթերթն կանոնաւոր կերպիւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԵՐՁԻ ՆԻՍՏԸ

Այս Միութեան վերջի ընդ-
հանուր նիստը տեղի ունեցաւ Յու-
նիս 11ին. ներկայից թիւը 120ի
չափ էր, ի հարկէ սոցա մեծա-
մասնութիւնն այցելուք կը կազ-
մէին: Բացի տանական գործու-
ղութիւններէ և ընթացիկ գործե-
րէ Պ. Շիւմանեան անդամ ընտրու-
ուեցաւ, և Պ. Հիւրմիւզեան՝ նոյն
երեկոյին ատենարանն ձուռեց Մի-
ացեալ Նահանգաց Սահմանադը-
րութեան և քաղաքացիութեան
վրայ մանրամասն կերպիւ: Արդ ա-
րեւ այսպիսի նիւթի մը վրայ ճա-
ռելն խիստ յարմար կը նկատուի
քանի որ նախադահական ընտրու-
թեան պայքարն սկսած է յուղել
ժողովրդի մտքերն: Յետ ատենա-
խօսութեան Տքթ. Սվազեան ա-
տենախօսի նիւթին կարեւորութե-
ան լինելը բացատրեց ու այն մեծ
նշանակութիւնն որ ունեցած է
յաշս քաղաքակրթեալ աշխարհի:
Պ. Հիւրմիւզի շնորհակալութեան
քուէ արուեցաւ իւր յաջող ատե-
նախօսութեան համար:

Նոյն ժողովոյ առջեւ յուղուե-
ցաւ նորէն Էկլիսեանի և Գարրի-
էլեանի ծանօթ խնդիրն որ մի քա-
նի ժամ զբաղեցուց ժողովն առանց
վերջնական որոշման մը յանդուր-
մի: Խնդրի բնութեան նայելով՝ ցաւ է
ըսել թէ Հայկական Միութիւնն
դեռ շատ նիստեր պիտի զոհէ այս
անձնական խնդիրն լուծելու հա-
մար, եթէ երբեք կարողանայ լու-
ծում մը տալու անոր:

Կէս զիշերի մօտ էր երբ ժո-
ղովը ցրուեցաւ 15 օրէն գումար-
ուելու սպցմանաւ:

ՊՕՍԸՆԻ ԱՅՑԵԼՈՒՆ
1892 Յունիս 18

... Խմբագիր,
Անցեալ կիրակի երեկոյ ժամը
3ին ատեններն տեղի ունեցաւ քա-
ղաքիս Հայկական Միութեան ընդ-
հանուր ժողովն որոյ ներկայ էին
10ի չափ անդամներ և 10ի չափ
ալ այցելու հիւրեր: Յետ ատենա-
կան գործողութեանց, ատենապե-
տըն, Պ. Տիւնեան ծանուց թէ Տքթ.
կապրիլն նոյն երեկոյ Լինէն Պոս-
թըն պիտի դար խօսելու համար:
Երբ խնդիր յարուցուեցաւ թէ ով
հրաւիրած էր յիշեալն, Պ. Ստե-
նապետն պատասխանեց թէ ի պաշ-
տօնէ հրաւիրուած չէր, այլ մի քա-

նի երկրապարհներ հրախրած է-
ին զայն Լինէ Պոսթըն դաւ, և նա
ընդունած է հրախրած: Այս խոր-
րոյն արձանագրութիւն խորունկա-
նորմադ կողմանէ և աստիճանա-
կար՝ Պ. Ա. Աւետիսեան արձա-
նագրեց այդ կէտ:

Ժամը 9 ժամ էր երբ Տըթ-
Կէպրիէլ ներս մտաւ, և զնայ
նստեցաւ ատենապետին մօտիկ,
որ համառօտ խօսքերով ատենա-
բանն ներկայացուց ժողովրդին,
և սա ելաւ խօսելու: Ատենախո-
սութեան նիւթն բարձրովն կրօ-
նական էր. Ազամ և Եւայէն սկը-
սելով եկաւ մինչեւ Քրիստոս. կար-
ծես թէ եկած էր Աստուածաբա-
նութիւն ուսուցանելու: Լսածիս
ու տեսածիս նայելով այս անձ այ-
ժամ լեզուն ու ուղղութիւնն փո-
խած է բոլորովն: Ուր որ կեր-
թայ կրօնական խնդիրներ քրքը-
ել կախի, կրօնական քողով ծած-
կուելու և անով պաշտպանուելու
մտօք: Արդէն ասէ իր 10 ամիս
առաջ երբ Ուսթըր զնայ այս մար-
դը, հոն Լուսաւորչապետութեան
ու Բողոքականութեան խնդիրը
յարոյց որոյ հետքերն կապրին
տակաւին: Նա համոզած էր շատ
մը պարզամիտ բողոքական Հայեր
թէ ինքն միակ բողոքական լինե-
լով աղատական Հայ լրագրաց խմբ-
ագիրներուն մէջ՝ պէտք է որ
բողոքականներէ օգտուի, որպէս
զի բողոքականք եւ ծայրունեան
երբ ազգային ինքնօրինութիւն
տրուի Հայ ազգին համար:

Տըթ. Ատենախօսին բանախո-
սութիւնն անկեց իր երեք քա-
ռորդ ժամ: Ատենախօսութեան
մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ վը-
րայ խօսելով ըսաւ թէ, «Հայ եկե-
ղեցին բարեկարգութեանց պէտք
ունի» և այս պահուն ժողովրդէն
ոմանք սուրբ սկզբներէ՝ իրենց ցա-
տուն ցոյց տալու համար:

Յետ ատենախօսութեան ժո-
ղովը փակուեցաւ ու ատենախօսն
երկու բաժանորդներ գտնելու
բարեբաղդութիւնն ևս ունեցաւ:
Ս.

Ք. Ա. Ղ. Ո. Ա. Ծ.
ԿԱՊՈՅՏ ՏԵՏՐԱԿԵՆ

— Փոխ-Հիւպատոս Պոյաճեան
առ Հիւպատոս Համբարձ:

Տարազքիր, 13 Ապրիլ, 91
Պատիւ ունիմ ձեզ հաղորդե-
լու խորհրդի և Բաղուի կողմի
Հայերին մէջ եղող վտանգաւոր
չարժան մասին ինձի հաղորդուած
ները. ազոր համար լուսաբոյն կը
համարիմ ինձ ուղղուած մի նա-
մակի հետեւեալ կտորը գնելուս:
«Այս ձմեռ գիւղերը շատ կեցող
և սեւայոր այս (խորհրդի) դաշ-
տին, ինչպէս և Բաղուի գաւառին
մէջ Հայերը մեծ անկարգութեան
մէջ են. իրենք մեծ քանակա-
թեամբ զէնք կը գնեն և ազատու-
թիւնը արկնով գնելու պէտքին
վրայ կը խօսին. նաեւ վատա՛ են
թէ Անգլիան կամ Ֆրանսան և կամ
Ռուսիան, բայց հաստատ չըլտեն
թէ ազնոյմէ ո՛րը, իրենց օգնու-
թեան պիտի գայ այս դարնան:
Իրենք կը պնդեն նաեւ որ 100000
աւելի Հայեր վնասուած և կրթուած
օտար սպայներ կրամամտարու-
թեան ներքեւ պատրաստ կեցած
են, այս գարունին թիւրքայի վը-
րայ յարձակելու, բայց չեն գի-
տեր նոյնպէս թէ այդ բանակ Ռու-
սիա՞ թէ Պարսկաստանի մէջ է:
Կը վախճում թէ մի քանի տար գը-
լուի մարդիկ այս կողմի Հայերը
կը գրգռեն սուտ լուրերով և Հա-

յերը այդ տեսակ տեղեկութիւն-
ները համեմատ դարձելով և ազնոյ
մասին խօսելով, մահմեդականե-
րի հետ իրենց յարաբերութեանը
մեծ ազդէս կը վնասեն: Շատ գիւ-
ղերի, եթէ ոչ ամենի մէջ, կատա-
ծի և անօրտաշտութեան մի ոգի
մտած է երկու ցեղերին մէջ և մի
քանի տեղերի ինչպէս որ Աշու-
ցիք և Իշմէ գիւղերի մէջ մահմե-
դականները մինչեւ իսկ սպառնա-
ցան սուք ելնել և ջարդել Քրիս-
տոնեաները: Իշմէի Թիւրքերը փոք-
րէքին Քիւրտները գրգռել Հայերի
դէմ, բայց չը յաջողելով, երկու
չարաթ առաջ իրենց թաղերի մէջ
հաւաքուեցան մեծ բաղմութեամբ
և գրգռու առին որ բոլոր մահմե-
դականները գան միասին Քրիստոնե-
այիները ջարդելու, և ինձ քանի
որ աղանք հրացան պարպել սկը-
սան և գործն այնքան առաջ տա-
րին՝ որ Քրիստոնեաները իրենց
վերջ եկած համարեցին, ուստի և
իրենք ալ զինուեցան և սպասեցին.
բայց ոչինչ պատահեցաւ: Անտա-
րակոյս մտքերի այս յուզեալ վի-
ճակի մէջ ու է մի փոքր շփոթ
կրնայ ստիպալի հետեւանքների
յանգիւր:

Ես նկատել կուտամ միայն որ
նմանօրինակ տեղեկութիւններ ու-
րիշ աղբիւրներէ ալ հասած են ինձ:
Ռուսիայի կամ ուրիշ անգղացի
ծպտեալ Հայեր այս կողմեր գոր-
ծունեայ կերպով կաշխատին յու-
սախարհով Հայերը ապստամբու-
թեան մը գրեւորու. բայց ակնե-
րեւ է որ այդպիսի մի քայլ ծայ-
րայեղ յիմարութիւն կը լինի ի-
րենց կողմէ և ուրիշ արդիւնք չու-
նենար, եթէ ոչ ինքզինքնին են-
թարկել մի վտանգի որի ծանրու-
թիւնը ոչ սք կրնայ հաշուել:

Եմ Ձերն Ելն.

ԹՈՎԱԿԱՆ ՊՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԳՈՐԾԱՌՈՐԱՅ
ԿՈՂՈՑԻՆ ՈՒ ԾԵԾԸ

Անցեալ Շաբաթ երեկոյ, Յու-
նիս 25, երբ իր քսան Հայ և Ա-
սորի գործաւորներ իրենց մետաք-
սեայ ժողովէնի գործարանէն
— որ 55րդ փողոց, 10 և 11րդ է-
վընիւնների մէջ կեցող Ճէյգըպ
Նիւի գործարանն է — դուրս կե-
լին, երկուստեանով մի շարա-
գործներ իրենց պեան ունենալով
այն վառարանային ապակեանա-
լը որ ասիէ առաջ յաջողած էր
փօլիս մ'ապանելով խոյս տալ, և
որ կառավարութեանէն ցարդ կը
փնտռուէր, կեղծ բարեկամու-
թեամբ կը մօտենան անոնց (գոր-
ծաւորաց) և սկիւրէթ կը խնդրեն:
Այն ինչ գործաւորը կը պատրաստ-
ուին իրենց թշնամի-բարեկամաց
այդ սկիւրէթի յարգանքն ընել,
յանկարծ կը տապալին գետին, կը-
րելով անօրինաց ստիպալի բռնու-
ներն ու գաւառներ հարուածներն
իրենց քթերուն ու բերաններուն
վրայ: Երբ ազգի մը կը վերաւոր-
ուին և ոմանք արկնուեց գետին
կը փուռին, յայնժամ շարագործը
կսկսին կողոպտել զայնս, շատե-
րէն տանելով 20, 15, 10, 7, 3 և
մէկ տալէրներն ու գոհարեցնեն:
Բօլիսներն թէեւ կը հանին, բայց
միայն շարագործներէն երկուք
կը բռնեն, իսկ միւսներն բոլորն
ալ կը յաջողին փախչիլ:

Իսկ Շաբաթ գիշեր այդ շա-
րագործաց պեան եւս 10րդ էվը-
նիւի մօտ իւր երկօր խոսնութիւն
բռնուած ու օրինաց ձեռքն յանձ-
նուած է:

Ծ. Ն. Ո. Ա. Գ.
Պրուքլին. — Տիկին և Տիար
Գ. Գառապարեան Յունիս 22ին բա-
րեբաղդութիւն ունեցան պղծինի
զծնունդ իրենց անդրանիկ դաւ-
կին, նաեւսն Գրիգոր Գառապար-
եանի:
Ի ստորեւ կը հրատարակենք
երգն որ Պ. Գառապարեան գրած
է փոքրիկ Գառապարեանի ծննդան
առթիւ:

ԵՐԳ ՄԱՆԿԱԿԱՆ
Ա.Ռ.
ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒՍՏՐ ԻՄ ՆՈՐԱԾԻՆ
ՆԵՒՏՈՆ Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ
Ծնեալ 92 Յունիս 22,
—

Ի՞նչ կայ սիրուն քան մանկիկն,
Անմեղ, կրօնիկ, թոմարովիկ,
Որ եկ աշխարհս այս անհուն,
Պահել իմ ազգ, տոհմ, անուն:

Իւր սեւուրիկ աչուկներն,
Նման աստուղ քրքրելուն,
Եւ պիտիտիկ քիթ բերանն,
Մերթ փոռքեն, միմօռն:

Երբ իրարու կը բաղիին,
Իւր չըթաղիկ թաթիկներն.
Եւ երբ կիցեն, կաքացին,
Իւր կոնտրիկ տոտիկներն:

Ինքզինքս զսպել կարող չեմ
Ինչ ընել ալ չի գիտեմ.
Ուրախութեանս կարծեմ,
Խեղճ պիտի թողնենք:

Վայ անառակ շար սղա՛յ,
Այժմէն սկսաւ գիտ խաբել.
Քնքոյց պառկած կը պօռայ
«Ինկա՛յ, ինկա՛յ, վար ինկայ»:

Իսկ իւր անդօր բաղիկն ալ
Բռնեց չինած միշտ չարժեն,
Կարծես մի Հայ զինուորի,
Մարզարանքները կատարեն:

Աստուած մեծ, որ ես յերկինք,
Խնդրեմ, պահէ պահպանէ.
Այս մանչուկ իմ գեղ, սիրուն,
Ձերծ ամենայն վտանգներէ:

Լինի բարի մարդ օր մը,
Հայու արիւն ու սիրտ կրէ.
Եւ իւր ծնողաց իղձերը
Ի գլուխ հանէ, կատարէ:

Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ
1892 Յունիս 25
Պրուքլին

ՄԱՆԱԳՈՅԺ
... Խմբագիր,

Ցաւ ի սիրտ կը ծանուցանենք
թէ՝ Մարաշցի Պ. Ծ. Մալաթիալ-
եան անուն երկրաստորդն որ իր
երեք շաբաթ առաջ Տաճկաստա-
նէն եկած էր անտեաց երկիրն՝
ոչ և առողջ կերպարանօք ու կազ-
մուածքով, բայց շարաթ մ'առաջ
ներքին հիւանդութենէ մը բռնու-
ելով երէկ հիւանդանոց փոխա-
գրուեցաւ և այսօր իւր մահկա-
նացունքները ի հասակի 18 ամաց:
Թաղման հանդէսն պիտի կատար-
ուի վաղը իւր եղբոր Տ. Հ. Մա-
լաթիալեանի ծախիւք:
1892 Յունիս 20

ՍՈՒՐԵՆ
Թրոյ

ԵՐԳԵՐ ԿՈՒՉՈՒՆ
Մեր հրատարակած Ազգային
երգարանին մէջ նպատակ ունենա-
լով զնեւ կարգ մը չի հրատարակ-
ուած ազգային երգեր ու բանաս-
տեղծութիւններ պատիւ ունինք
ներկայիս յայտարարել արդոյ
հրատարակութեան թէ սիրով պի-
տի ընդունինք մեզ զրկուած ամէն
երգեր ու բանաստեղծութիւններ՝
հրատարակելու համար այս ընդար-
ձակ երգարանին մէջ:

Առանց երգ մը տեսնելու և
քննելու հրատարակութիւնն չենք
սպասուկեր:

ՊԱՏԱՍ ԽԱՆ ՆԵՐ
Ուսթըր Ն. — Ձեր նամակն
առած ենք, Պ. Գ. մէկ երկու շա-
բաթ առաջ Փրովիտէն գնացած
է. հետեւաբար ձեր խնդրածը
կարելի չէ ստուգել:
Տ. Ս. Ա. Պոսթըն — Մեր քով
չկան ձեր խնդրած քարտէզներն:
Արմէնիայի խմբագրութեանէ կըր-
նաք ստանալ զայնս:

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ
ՃԳՆԱԻՈՐ ԷՂՕ
(Շաբ. ան'ս թիւ 56)
Գ.
—

Գիւղացին մոռանում է ոչխար
ծախելու բուն նպատակը այդ
պէտքի առաջ և առնում է շորե-
րը: Երբ հաշվում են, գիւղացին
վճարում է ունեցածը, բայց բա-
նից դուրս է գալիս, որ 100 ղու-
րուչ պարտք է մնում վաճառա-
կանին:

— Կոտորները ե'տ առ, ասում
է գիւղացին, — ես էլ փող չու-
նիմ:

— Հոգ չէ', ժպտում է վա-
ճառականը, — ես քեզ հաւատում
եմ, դու մեր Կիրակոսի աղան չե'ս,
քեզ մինչեւ 5-600 ղուրուչ ղուր-
պան լինի... առ էլ տամ... բայց
չատ կը լինի, մեղք ես, յետոյ
գժուար կը վճարես...:

Հրէ'չը... ձգել է թակարդը
և այժմ բարեհաճում է խոճալնը-
րա վրայ: Գրում են պարտամուր-
հակ, գիւղացին ստորագրում է ո'չ
թէ 100, այլ 150 ղուրուչի մուր-
հակ և այդ նկատում է այնտեղ
նստած մէկը...:

— Այդ ի'նչ ես արել, ասում
է նա:

— Լռի'ր, փոխում է նրան
վաճառականը, — ես քեզ կը շա-
հեցնեմ:

Գիւղացին վեր է կենում գնա-
լու և, յանկարծ յիշելով թէ ին-

չու համար էր քաղաք եկել, յու-
սահաւորար կանգնած է մնում:
— Ի'նչ կայ բարեկա'մ, ա-
սում է վաճառականը, — չը լինի'
թէ եկել էիր «վերգի»ի համար
փող գտնելու...
— Ա'խ, գոչում է գիւղացին,
— էլ ի'նչ անեմ, առանց փողի
մնացի:

— Հոգ չէ', ասում է նրան վա-
ճառականի մօտ նստած «մէկը»,
ես քեզ կրտամ ինչքան կուզես:
Գիւղացին հրեշտակ տեսնել
է կարծում:

Մի ժամից յետոյ նա գիւղ է
դառնում հարկի համար 2 սակի
ճարած, բայց իւր հողը վաշխա-
ռուի մօտ 5 սակի համար գրաւ
գրած...:

Այսպէս ուրեմն վաճառականը
և վաշխառուն՝ միացած հարկա-
հանի հետ՝ տալիս են գիւղացուն
առաջին կործանիչ հարուածը...:
Այսպէս է լինում, երբ գիւղացին
մի բան ունի ծախելու: Իսկ երբ
չունի, դատարկ ձեռքով քաղաք
է մտնում մի գառ իւր նուէր ա-
ռած իւր հետ՝ տալու համար այն
հրէշ վաշխառուն, որը պիտի կոր-
ծանէր իրեն...:

Այդպիսի վաշխառուներից մէ-
կըն է Մարտիրոս աղան, բայց նա
չատ անգամ էլ տանն է գտնվում,
որովհետեւ յաճախորդ շատ ունի
և աղէտը է նրանց գոհացնել:

Առաւօտ էր և Մարտիրոս ա-
ղան նստել գրում էր մուրհակ-
ներ՝ մի քանի գիւղացոց համար,
երբ սենեակի շեմքի վրայ երեւե-
ցաւ մի սիրուն դէմք:
(Շարունակելի)

ՀԱՎԵՐՔԻ ԻՄՓՐՈՒՎՄԵՆԹ ԸՆԿ-
9 ՈՒՕՐԼՏ ՊԻԼՏԻՆԿ
HAWORTH IMPROVEMENT Co.
9 WORLD BUILDING

Ձեր ուղարկութիւնը կը հրաւիրենք Հաւորդի վրայ, որ ունի
գեղեցիկ գերք մը, Ուէսթ Ծօր երկաթուղոյն զծին վրայ, Նիւ Եորքէ
14 մղոն հեռաւորութեամբ, Եօնքըրսի գիմացը: Ենք շինելու հա-
մար խոշոր կտոր հողեր 25 ոտք լայնութեամբ և 150 ոտք երկայ-
նութեամբ, կամ 3750 քառակուսի ոտք տարածութեամբ, պիտի
ծախուին իւրաքանչիւր քառակուսի ոտքը 3 ալան և 4 ալան սէնթի
և կամ կտորը 112 ու կէս և 150 տօլարի (գիրքին համեմատ):
Այս հողերը կրնան վաճառուիլ ամառական վճարով, նախ՝ 10
տօլար կանխիկ և յետոյ ամիսը 5 տօլար տալով:
Մեր առաջին 50 յաճախորդներուն հետեւալ շնորհումներն կլինին
Ա. — Վճարելի դրամին համար տոկոս չառնուի:
Բ. — Ամեն անոց որը կանխիկ կը վճարեն և 1893 Յունիս 1էն
առաջ առն կը շինեն, հողին գնոյն մէկ երրորդը պիտի գեղջուի:
Գ. — Տուն շինողներուն ձրի աւազ պիտի տրուի:
Հողերը տեսնելու համար Հաւորդէ երթալ ուղղութեամբ շոգե-
կառքի ձրի տոմսակներ կրնան ստանալ գիմելով առ
Պ. Բ. Վարդուկեանց ի թիւ 334 խառ 21րդ փողոց, ԱԶԱ-
ՏՈՒԹԻՆԻ խմբագրատունն և Հաւորդէ Իմքրուվմէնթ Ընկերութեան,
ի թիւ 9 Ուօրլտ Պիլտինկ, Նիւ Եորք: Հետեւեալ անձինքը կը յանձ-
նարարեն իւր մեզի համար վկայողներ:
Պ. Ուիլիամ Հուսոյ, հողային տնօրէն Միւլուէլ Լայֆ Ինչու-
րէնս Ընկերութեան, յանկիւն Նասօ և Սիտըր փողոցաց, Պ. Հէնրի
Գօրլէնք, գանձապահ Քիլլըրոյտ գրամատան, յանկիւն 57րդ փո-
ղոցի և Տրէ Էվընիւի, Պ. Գէորգ Ա. Միլնսեան, ի թիւ 145 Նասօ
փողոց և Պատ. Բօպէրա Ս. Մաք-Արթըր, քարոզիչ 57րդ փողոցի
Գէլլըրի Պալիսիալ ժողովարանին, որ կը վկայէ հետեւեալ կերպով:
«Ինձ մեծ հաճոյք կուտայ ըսել թէ Հաւորդէ երկրացի պեցելե-
լէն յետոյ, զիրքը կը նկատեմ իւր ամենացանկալին որ կը ձանշնաւ
Նիւ Եորքի շրջակայից մէջ, որ մեծ առաւելութիւն ունի: Գիտնիք
կորացեւ է, «Ինչէ գեղեցիկ», և դիւրութեամբ կրնայ բարձր աստի-
ճանի մշակուիլ: «Օղբ մաքուր և ներշնչող է, ջուրը մաքուր և ա-
ղէկ»: Նիւ Եորք քաղաքին գրացնութեան մէջ գտնուած շատ մը
տեսներու, դաշտերու, առուակներու և աղբերց հաճելի զանազա-
նութիւն ունի: Հին ջաղացքը գուրկ չէ իրական հրապոյրէ և պատ-
մական արժէքէ: Մէկ խօսքով պէտք է ըսեմ որ տեղը խիստ պայ-
ծառ ապագայ մը ունի»:
ՄԱՆ. — Անոնք որ կը փափաքին Յուլիս 4ին Հաւորդէ երթալ
գնելու նկատմամբ, կրնան շոգեկառքի ձրի տոմսակներ ստանալ
երթալու համար:

Eguirao
Binding & Mailing Co.
438 Pearl Street,
NEW YORK.
Open day and night.

ՄԱՆՈՒՑՈՒՄ.

Այն ամէն Հայերն որք կը փափաքին դրամ զրկել իրենց բարեկամաց ի թուրքիա կամ ի Յունաստան, Չէք Պանք դրամատան փոխանակութիւններն պիտի գտնեն ամենապակասով, ամենաթանկ եւ արագաբար:

MATHEWS & CO.,
BANKERS.
No. 2 Wall St. New York

Scott Printing Company,

JOHN SCOTT,
Manager.

PRINTERS.

PRESS ROOMS:
220 William St., NEW YORK.
Presses Running Day & Night.

Հայ երիտասարդաց թանգարանի Միութեան Խնամակալութիւնն պատիւ ունի ծանուցանել թէ ի դիւրութիւն ընթերցասէր Հասարակութեան Հետեւեալ գործակալութիւններն Հաստատուած են Նիւ Եորքի, չորակալայի եւ այլ քաղաքներու մէջ.

- Տ. Մ. Տաղլեան, Նիւ Եորք 779 Երկ. Այլ.
- Տ. Յ. Աղաւան, Նիւ Եորք. 432 Ուէսթ 56րդ Փողոց
- Տ. Մ. Շիրմանեան, 91 Մալիքի Փողոց, Նիւ Եորք
- Տ. Յ. Համալեան, Ն. Ե. 43 Սանտ Փոյգ Պրուէրին
- Տ. Յ. Պատմաճեան, Բոյլեճ Փողոց, Լ. Ա.
- Տ. Կ. Չանգալեան, 455 Փարսիա Այլ. Ճէրզի Սիթի Հայթ, Ն. Ե.
- Տ. Պ. Տէյրմանեան, 373 Ուէսթ Բրոքլին, Ուէսթ Հայթ, Ն. Ե.
- Տ. Յ. Չուճեան, Փաթրուր, Ն. Ե.
- Տ. Յ. Թօփրահանեան, Ֆիլատէլֆիա, Փէնս.
- Տ. Յակոբ Թոփրահանեան, Մալլոր և Թրոյրլիլ, Բօնն.
- Տ. Տ. Մոհարարեան, Փրովիտէնս, Բ. Ա.
- Տ. Կ. Սօպաճեան, Եօնքըրըս, Ն. Ե.

ՆՈՐ ՀԵՐԱՐԱՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ

Այս երգարանն որ իւր տեսակին մէջ մինչ ցարդ տպուածներէ թէ՛ դերադանցն և թէ՛ ամէնաընդարձակն պիտի լինի, մաքուր թղթի վրայ ընտիր տպագրութեամբ, Բոլոր գիրքն պիտի լրանայ մի քանի օրէն:

Հասարակութեան թախանձանաց համեմատ որոշած ենք իւր 500 օրինակ Փօրմա առ Փօրմա ծախել: Մէն մի Փօրմա 16 երեսն կը բաղկանայ և կարծէ երկու սէնթ: Ամբողջ գրքին գինն է 50 սէնթ, 75 սէնթ և մէկ տոլար՝ կազմին համեմատ:

Սոյն Փօրմաներէն գնել ուզողներ կրնան դրամն յղել խմբագրութեան փոսթայի գնոյն Հետ մէկտեղ: Մէկէ աւելի օրինակ գրողներէ ճամբու ծախք չի պահանջուիր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ԲԱՆԱԼԻ ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Նիւ Եորք — Տպգր. ԱՐԱՐԱՏԵԱՆԻ Գրեց
ԱՐԱՐԱՆԱՅԱՆ
Գին 25 սէնթ

Անգղիերէն ուսանիլ փափաքողաց համար խիստ ընտիր և յարմար մատենիկ մ'է սա, դիւրահասկանալի ոճով:

Գնել փափաքողք պարտին դիմել խմբագրութեան կամ Հեղինակին Հետեւեալ հասցէի.

A. AYVADIAN
49 Columbus Ave. N.Y.

Շնորհակալութեամբ ընդունած ենք Հ. Յ. Թորոսի «Ընտիր Հայկազունք» ի երկրորդ տպագրութիւնն՝ պարզ և աշխարհիկ լեզուով, և բանաստեղծական ոճով որ շատ մը ընտիր Հայկազունք կենսագրութիւնն կուտայ: Տպագրութիւնն խիստ մաքուր է և պատկերներն ընտիր: Գինն է 5 Փր. Տպագրութիւն Միութեան, Վէնէի:

— Դասաւորութիւն Ռուբինեան դրամոյ, Հայր Կղեմեան Վ. Սիպիլեանի: Վիեննայ տպագրութիւն Միութեան:

— Մարգարան, Պ. Գ. Գասպարեանի, որ կուսուցանէ ղրնուորական կրթութիւն, գինն է 50 սէնթ: Կը վաճառուի խմբագրութեան քով:

— «Տէր Արմինիքն օր տէր փիլիսոփ Արարատ» Հայք կամ Ժողովուրդ Արարատայ անունով իւր 220 երեսէ բաղկացեալ մի գիրք հրատարակուած է Տըթ. Մ. Ս. Գաբրիէլեան: Գրքին տպագրութիւնն մեր ստացած պրակէն դատելով բաւական մաքուր է: Հարկ է հոսյաւելու թէ այս Տըթ. Գաբրիէլեանն չէ այն անձը որ «Հայք» անուն թերթ մը կը հրատարակէ քաղաքի մէջ:

ՏԳԹ. Չ. Բ. ԹԵՆՏՈՐԵԱՆ
41 Oliver St. N. Y.

Հիւանդ կընդունի յիշեալ տեղը ամէն օր կէս օրէ վերջ ժամը 2 Էն մինչեւ 5. Իսկ ուրիշ ժամերու մէջ Տէօթ. Գրեց տեսնելու համար առանձին կարգադրութիւն կը լինի:

ՀԱՅՐԻԿԻ ՊՏԱԿԵՐԸ
Հ. Հ. Մ. Նիւ Եորքի Օթեակը չինել տուած է ՀԱՅՐԻԿԻ փառաւոր պատկերներն ընտիր քարտի վերայ մաքուր տպագրութեամբ: Կը վաճառուի Խմբագրութեան քով հաւր 10 Սէնթի:

Ս. Ա. ՍԱՄՈՐԵԱՆ
107 Ֆէտէրալ փողոց,
Փրովիտէնս Բ. Ա.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ Հայ Հասարակութեան թէ գործակալն լինելով չափեալային հոգակաւոր ընկերութեան մը, դիւրութիւն ունի ամէն կարգի տոմսակներ վաճառել Եւրոպայի ամէն քաղաքներու համար և թէ փոխադարձաբար:

Գիններն խիստ դիւրամատչելի են: Փափաքողք պարտին դիմել Հետեւեալ հասցէին՝

S. A. SAMOOR.
107 Federal st., Providence, R. I.

Վ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ
Ուսթըր, Մաս.

Կը հրաւիրէ իւր Հայերնակցներն Հանգերձեղէններ կամ գլխարկ գնելու համար նախ գիմել **Bay State clothing Co.**

Ընկերութեան վաճառատունն ի թիւ 46 և 48 Ֆլորիդա ըսթրիթ, ուր ինքն ամէն Շաբաթ երեկոյններ կը լինելով մասնաւոր հոգ կը տանի Հայ յաճախորդաց:

Ա. Չ. Դ.
Ի նպատակ Հայ երիտասարդաց թանգարանի Միութեան կը ծախուին:



1. Բաֆֆի վերի պատկերին խոշորագիրը, առանձնէկ ու կէս մատնաչափ երկայն և ութ մատնաչափ լայն: Գին 10 սէնթ:

Գուռ Գափուի Հերոսներուն պատկերը:

2. Յարութիւն Չուսեղուեան 3. Կէմ ալմազ Մանուկ երկուքը 5 սէնթի:

Գնել փափաքողներ կը պարտին դիմել Միութեան թանգարանայեան կամ նորա գործակալաց և կամ ԱԶՍՏՈՒԹԻՒՆ ԼԸՐԱԳՐԻ խմբագրատունը:

Փոստի ծախքը մեր վրայ է: Պետրոս Թորոսեան թանգարանայեան

779 երկրորդ ամբիւ Նիւ Եորք

ԺԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄ Է
ԻՍԿ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

ՄՏԱՏԱՆՁՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ

Կ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
53 CEDAR ST. N. Y.

Կիւլպէնկեան տունն որ հանրածանօթ է ամէն տեղ, վաճառականական ճիւղ մ'ալ Նիւ Եորքի մէջ հաստատուած լինելով՝ փոխանակաբեր ևս կուտայ Եւրոպայի գլխաւոր իսկ թուրքիայի ամէն քաղաքաց համար: Ամերիկեան Հայ դպրութեանը որք փոխանակաբեր գնելու համար միշտ դժուարութեանց բաղկած ու ժամանակի կորուստ ունեցած են տեղական դրամատանց դիմելով, այսուհետեւ դիւրութեամբ և առանց ու է կորուստի պիտի կարողանան այս վաճառականական տան փոխանակաբերներն ձեռք ձգել անձամբ կամ նամակաւ դիմելով Տ. Կ. Կիւլպէնկեանի վերադիմելու հասցէով:

Նիւ Եորքէ դուրս բնակող անձինք դժուարութեան չի բաղխելու համար կրնան իրենց յղել դրամն իւրեանց քաղաքի դրամատունն գնել և անկէ չէք մը առնելով յղել յիշեալ հասցէին, ուրկէ պիտի ընդունին անոր փոխարէն ինքուրած փոխանակաբեր վերադարձ թղթատարով:

Աւելի մանրամասնութեան համար դիմել Հետեւեալ հասցէին

GULLABI GULBENKIAN & Co.
53 Cedar St. New York City,

ԷԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
438 ՓԵՐԼ ՓՈՂՈՑ

Այս տպարանն որ իւր տեսակին մէջ անգլարներն է ի Միացեալ Նահանգս, այժմ աւելի ընդարձակած ու ճոխացած է նոր տառերով ու տպագրական պէտքերով, անանկ որ կարելի է գոհացուցիչ ու չափաւոր գներով տրուող գրքեր, Լրագիր, Տետրեր, Այցետոմսեր, Պաշարաններ, Փոխանակաբեր, Լէն. Լէն.

Նամանակէս այս տպարանի դիւրութիւնն ունի տպագրել Անգլիերէն մանր տետրակներ և ամէն տեսակ փոքր գործեր, ինչպէս են, Այցետոմս, Պաշարան, Անդորրագիր, Լէն. Լէն.

Տպագրութեան մաքրութիւնն ապահովեալ է: ԷԿԻՆԵԱՆ տպարանն տեղական տպագրիչներու մէջ գրեթէ մը բռնելու համար, որոշած է մասնաւոր հոգ տանել այս մասին առանց նկատի առնելու շահու որքանութիւնն:

ԷԿԻՆԵԱՆ ԿԱԶՄԱՏՈՒՆ
438 ՓԵՐԼ ՓՈՂՈՑ

ԷԿԻՆԵԱՆ կազմատունն որ ամենէ ընդարձակն է Հայ կազմատուններու մէջ, և որ կը մրձի տեղական շատ մը կազմարար ընկերութեանց հետ, իւր շոգեշարժ մեքենայից ու վարպետ կազմարարաց շնորհիւ կարողացած է առնուի ունենալ հրապարակի վրայ և շահիլ պատուաբեր համբաւ:

Այս կազմատունն իւր նոր և ընդարձակ գործատան մէջ նորաւոր կարգադրութիւններ ըրած է աւելի ընդարձակ հիման մը վրայ գործ ընելու համար: Հոս կը կազմուին գրքեր և տետրեր ամէն քանակութեամբ. կը ծալուին թերթեր ու հանգէտներ Լէն. Լէն. կարճ ժամանակի մէջ,

Գինները չափաւոր են, ամէն տեսակ կազմի համար: Միանգամ փորձողն ուրիշ կազմատուն մը չի դիմեր բնաւ: Մի մոռնաք մեր այժմեան նոր հասցէն որ է
438 Pearl St. N. Y.

REGULATE THE STOMACH, LIVER AND BOWELS, AND PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tablets contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief. Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.,
10 Spruce Street, New York City.

Հայաստան
ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ
Կը ՀՐԱՏԱՐԱՐԱՆԻ ԱՅԺՄ
ՏԱՄՆ ԵՒ ՀԻՆԴ ՕՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ
Տարեկան բաժանորդագիրն մէկ տոլար մ'է միայն,
ԿԱՄ ԵՐԵՒ ՕՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ
Խմբագրական յօդուածներ, Թղթակցութիւններ, զուարճալիք և այլ կարեւոր յօդուածներ:

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԹԱՆԵԱՆԻ

Մ. Փորթուգալեանի դրած Հայերնապրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ դա՛նալան քաղաքների մէջ և զանազան տպագրութիւնների տակ իւր երեւմն դրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած էր լինելով կորսուած են այժմ: Այն մի քանի ոտանաւորներ որոնք իբրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ: ցիր ու ցան կը գտնուին Կ. Պօլիս տպագրուած աղբայրն երգարաններին մէջ որոյ վերապի տպագրութիւնն վաղուց արդէն արգիւտած է և «Ասիա» և «Արմենիա» լրագիրներին մէջ: Նմոյշների մէջ փոքրիկ տեղեկութիւններ աղբուած են նաեւ թէ այդ ոտանաւոր ինչ տպագրութիւնների տակ ներշնչուելով գրուած են:
Գինն է 15 սանթիմ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
Կ Ս Կ Ծ Ա Ն Բ
Գրեց
Հ. ԷԿԻՆԵԱՆ.
Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած, որ կը վաճառուի խմբագրութեան քով հաւր 5 ՍԷՆԹ թի միայն:

ԱՐՄԵՆԻԱ
ԱԶՍԱԿԱՆ ԿԻՍՏՆԱԲԱՐԱՐՈՒԹԻՐՈ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱԲԱՅԱՆ,
ԵՒՆ. ԵՒՆ.
Տարեկան բաժանորդագիրն է չորս տոլար. Հայցէն.
Redaction du journal
"Armenia",
Marseille, France.

ՀԱՆԴԷՍԱ ԱՄՍՈՐԵԱՅ
ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ,
ԱՐՈՒՆՍՍԱԳԻՏԱԿԱՆ.
Ե. Տարի 1891.
Տարեկան բաժանորդագիրն է 10 Փր. (4 Բոլորի). Հայցէն.
Redaction de la Revue "Hantess",
Vienne, (Autriche).
VII Mechitaristengasse, 4.